ջերմ գոլորշին թանձր սիւներով դուրս է հոսում լայն պնչածակերից: Երբ մի տեղ ճանապարհը նրան երկբայական է թւում, նա զգուշութեամբ կանգ է առնում: Ամբողջ քարաւանը նոյնպէս, նրա ետեւում, դադարեցնում է իր ընթացքը: Նա խորին ուշադրութեամբ գլուխը այս կողմ ու այն կողմ է դարձնում, ականջները ցցում է, կարծես հողմերի ընթացքն է ուզում հետազօտել: Նայում է դէպի երկինք, կարծես աստղերի ուղին է ուզում դիտել: Դունչը տանում է դէպի գետին եւ հոտ է քաշում, ստուգելու՝ արդեօք անցե՞լ էր այնտեղից մի որեւիցէ արարած: Մի մեղմ խրխինջ արտայայտում է նրա սրտի ուրախութիւնը: Նոյն ուրախութիւնը անցնում է անասունների ամբողջ շղթայով. բոլորը ընդհանուր ձայնով խրխնջում են: Նրանց առաջնորդը գտաւ ուղին, փոխեց քայլերը: Եւ ամբողջ շղթան շարժւում է նրա ետեւից: Գիշերային խաւարը նրա համար չէ: Նրա երկու լուսափայլ աչքերը՝ երկու լապտերներ են, որ առաջնորդում են նրան: Երբեմն նա սարերի, ձորերի միջով է գնում կամ խորին անդունդների եզերքով է ընթանում: Մի սխալ քայլ կարող է գլորել նրան անյատակ վիհը եւ նրա հետ ամբողջ քարաւանը կորստեան մատնել: Բայց նա երբեք այդպիսի սխալներ չէ անում, կարծես նրա ամուր սմբակներն եւս աչքեր ունեն: Երբ մօտենում են իջեւանին, որքան էլ մութ ու խաւար լինէր, նա մի քանի մղոն հեռաւորութիւնից իմանում է այդ եւ դարձեալ ուրախաձայն խրխնջում է: Նրա հետեւողները ձայնակից են լինում նրան եւ շտապեցնում են իրանց քայլերը, որ շուտ տեղ հասնեն եւ հանգստանան:

Բեռնակիր ջորիները առաջ էին ընկած, իսկ նրանց ետեւից գնում էին ճանապարհորդները, ոմանք ձիաների վրայ նստած, ոմանք՝ աւանակների վրայ: Այդ խեղճ անասունների բեռը աւելի ծանր էր: Իւրաքանչիւրի վրայ բարձած էին երկու մեծ ջուալներ, լցրած զանազան իրեղէններով, որ անհրաժեշտ են ասիական ճանապարհորդութեան համար: Ջուալների մէջ տեղաւորուած էին զանազան կարասիք, ինչպէս կաթսայ, պղնձէ ամաններ, ջրի աֆթաֆայ, սուրճ պատրաստելու ղաւանոց, նարգիլէ՝ իր բոլոր պարագաներով եւ այլն: Նրանց թւում կար եւ ամբողջ պաշար ուտեստի համար, ինչպէս՝ հաց, իւղ, բրինձ, պանիր, աղ, սոխ, քամած մածուն եւ այլն: Իւրաքանչիւրը իր խոհանոցը իր հետ էր ման ածում. ինքը իր խոհանոցի ե՛ւ խոհարարն էր, ե՛ւ վայելողը: Առանց այդ պատրաստութիւնների կարելի էր քաղցած մնալ, որովհետեւ ամառը քարաւանը սովորաբար իջեւանում է բնակութիւններից հեռու, բացօթեայ տեղերում, անասուններին ճարակ գտնելու համար: Բնակութիւնների մօտ գիւղացիք թոյլ չեն տալիս, որ անասուններն արածեն: Ջուալների վերեւից կապած է ճանապարհորդի անկողինը, եւ այդ փափուկ տե-